ԱՐԴ/0233/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 հոկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2024 թվականի ապրիլի 2-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ռուսլան Սերգեյի Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 44-

46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 83017923 (ԱՐԴ/0233/01/24) քրեական վարույթը:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 4-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.1. 2024 թվականի օգոստոսի 19-ին թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթը վերաբաշխվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Ռուշանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 23-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 8-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հոկտեմբերի 9-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների փաստական և իրավական նկարագրությունը.</u>

5. 2024 թվականի մարտի 12-ի որոշմամբ Ռուսլան Սերգեյի Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 44-46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա օժանդակել է իր մորաքրոջ որդուն՝ Եղիշե Կարոյի Գևորգյանին, Ֆրանսիայի*

Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով խոշոր չափերով՝ 20,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցի և առանձնապես խոշոր չափերով՝ 0,128 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 16 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերի մաքսանենգությանը, որից 17,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը փորձել է օժանդակել Եղիշե Կարոյի Գևորգյանին՝ նրա կողմից գործածման համար պահելուն, իսկ զգալի չափերով՝ 3 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և առանձնապես խոշոր չափերով՝ 0,032 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 4 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը փորձել է առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերել իր գործածման համար, առանձնապես խոշոր չափերով՝ 0,096 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 12 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը փորձել է օժանդակել Եղիշե Կարոյի Գևորգյանին՝ ապօրինի իրացնել քնությամբ դեռևս չպարզված անձանց:

Այսպես.

Ռուսլան Սերգեյի Կարապետյանը Ֆրանսիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով, նախնական համաձայնությամբ, օժանդակել է Ֆրանսիայի Հանրապետությունում բնակվող իր մորաքրոջ որդուն՝ ՀՀ քաղաքացի Եղիշե Կարոյի Գևորգյանին, Ֆրանսիայից Հայաստան առաքել խոշոր չափերով՝ 20,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոց և առանձնապես խոշոր չափերով՝ 0,128 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 16 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատեր, որից 17,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը փորձել է օժանդակել Եղիշե Կարոյի Գևորգյանին՝ նրա կողմից գործածման համար պահելուն, իսկ զգալի չափերով՝ 3 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և առանձնապես խոշոր չափերով՝ 0,032 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 4 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը փորձել է առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերել իր գործածման համար, առանձնապես խոշոր չափերով՝ 0,096 գրամ

«Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 12 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը փորձել է օժանդակել Եղիշե Կարոյի Գևորգյանին՝ ապօրինի իրացնել քնությամբ դեռևս չպարզված անձանց:

Եղիշե Կարոյի Գևորգյանը քրեական վարույթով չպարզված հանգամանքներում ձեռք բերված «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի՝ մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման N 1 հավելվածի 82-րդ կետով նախատեսված խոշոր չափերով՝ 20,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և նույն հավելվածի 31-րդ կետով նախատեսված առաձնապես խոշոր չափերով՝ 0,128 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 16 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը Ֆրանսիայի Հանրապետությունից փոստային ծառայություն մատուցող «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով, օգտագործելով ոմն «Ange Marie, 19 RUE ARISTIDE BRIAND, 87100 LIMOGES FR-FRANCE» անձի տվյալներն ու հասցեն, մաքսային հսկողությունից թաքցնելու և դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով, Ռ.Կարապետյանի մոր՝ Սիդա Արամայիսի Կարապետյանի անվամբ Ֆրանսիայից ապօրինի առաքել է ՀՀ:

2023 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ ՊԵԿ ՄԴՊ աշխատակիցների կողմից «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» և «Վերահսկելի մատակարարում և գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում «Ange Marie, 19 RUE ARISTIDE BRIAND, 87100 LIMOGES FR-FRANCE» տվյալներով անձի անվամբ Ֆրանսիայից ՀՀ ներմուծված ծանրոցում հայտնաբերված «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ դեղահատերը փոխարինվել են արտաքինով նման և նույն քաշով զանգվածներով, որից հետո 2023 թվականի նոյեմբերի 22-ին, օպերատիվ-հետախուզական

միջոցառում իրականացնելու նպատակով, փոխարինված զանգվածով «EW132644486FR» նույնականացման համարով առաքանին ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչությունից տեղափոխվել է Արմավիրի մարզի Արմավիր քաղաք՝ փոստային առաքումն իրականացնելու համար:

Ռուսլան Սերգեյի Կարապետյանի մայրը՝ Միդա Կարապետյանը, տեղեկանալով, որ իր անվամբ փոստային բաժանմունքում առկա է փոստային առաքանի՝ այցելել է փոստային բաժանմունք, ստացել առաքանին և քայլել դեպի տուն: Ռուսլան Կարապետյանը տեսնելով մորը՝ ընդառաջ է գնացել նրան, սակայն իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում նախապես փոխարինված զանգվածներով առաքանին ստանալու պահին 2023 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 12:05-ին, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով Արմավիր քաղաքի Հայրենյաց փողոցի 32 հասցեի դիմաց ձերբակալվել է ՀՀ ՊԵԿ ՄԴՊ վարչության և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ԹԱՇԴՊ վարչության ծառայողների կողմից, ինչի հետևանքով իր կամքից անկախ հանգամանքներում Ռուսլան Սերգեյի Կարապետյանը չի կարողացել ավարտին հասցնել առանց իրացնելու նպատակի խոշոր չափերով՝ 17,34 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը Եղիշե Կարոյի Գևորգյանի գործածման համար պահելուն օժանդակելը, զգալի չափերով՝ 3 գրամ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և առանձնապես խոշոր չափերով՝ 0,032 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 4 հատ «B8» ներհրված դաջվածքով դեղահատերը իր գործածման համար առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք բերելը, առանձնապես խոշոր չափերով՝ 0,096 գրամ «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 12 հատ «BB» ներհրված դաջվածքով դեղահատերը Եղիշե Կարոյի Գևորգյանի կողմից քննությամբ դեռևս չպարզված անձանց ապօրինի իրացնելուն օժանդակելը: (…)»[1]*:*

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2024 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ բավարարելով մեղադրյալ Ռ.Կարապետյանի պաշտպան Ս.Անդրիասյանի միջնորդությունը, արձանագրել է

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 122-124:

հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ Ռուսլան Սերգեյի Կարապետյանին վերագրվող ենթադրյալ արարքների փաստական նկարագրությունից պարզ է դառնում, որ 2023 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կողմից «Ange Marie, 19 RUE ARISTIDE BRIAND, 87100 LIMOGES FR-FRANCE» փվյալներով անձի անվամբ Ֆրանսիայից ՀՀ ներմուծված ծանրոցում հայտնաբերված «Հաշիշ» տեսակի թմրամիջոցը և «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ դեղահատերը հայտնաբերվել և փոխարինվել են «Զվարթնոց» օդանավակայանում, որը գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:*

Դատարանը անհրաժեշտ է համարում կատարել մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների և տրված իրավական գնահատականների վերլուծություն պարզելու համար վերագրվող արարքների ավարտի պահը, որն էլ իր հերթին հնարավորություն կտա հստակեցնել, թե որ դատարանի ընդդատությանն է պատկանում այս քրեական գործը:

Այսպես՝ անձին վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի կատարում:

(…)

Հարկ է փաստել, որ վերոնշյալ վերագրվող արարքը հանդիսանում է ավարտված սահմանով դրանք ապօրինի տեղափոխելու պահից: Այս դրվագի կապակցությամբ Դատարանը ավարտի պահի վերաբերյալ հստակեցման անհրաժեշտություն չի տեսնում և արձանագրում է, որ վերագրվող արարքը ավարտվել է Զվարթնոց օդանավակայանում, ավելին՝ ըստ հանրային մեղադրողի ևս մեղադրյալն արարքն ավարտել է, քանի որ վերջինիս չի վերագրվել այդ արարքի հանցափորձ:

Հաջորդիվ վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 44-46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396-րդ հոդվածի 3-րդ մասով արարքները, ըստ հանրային մեղադրողի կողմից տրված իրավական գնահատականի, հանդիսանում են հանցափորձի փուլում ավարտված արարքներ: Այս վերագրվող արարքների ավարտման պահի վերաբերյալ եզրահանգման գալու համար նախևառաջ

անհրաժեշտ է հստակեցնել, թե վերագրվող արարքներից որևէ մեկը արդյոք հանդիսանում է տևող հանցագործություն:

(...)

Նախ Դատարանը փաստում է, որ մեղադրյալին վերագրվող արարքներին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ և 396-րդ հոդվածներով տրված իրավական գնահատականները ինքնին չեն փաստում, որ անձը մեղադրվում է տևող հանցագործության կատարման մեջ, քանի որ մի շարք օբյեկտիվ կողմի դրսևորման եղանակներ չեն հանդիսանում տևող հանցագործություններ:

Վերոնշյալի հաշվառմամբ, զերծ մնալով սույն քրեական գործի շրջանակներում փաստական հանգամանքները և իրավական գնահատականները վերլուծելուց, վերացարկվելով սույն գործի հանգամանքներից՝ Դատարանը գտնում է, որ վերոնշյալ երկու հանցակազմերի շրջանակներում, երբ մեղադրյալին մեղսագրվում է հանցափորձ, վերջինիս վերագրվող հանցանքը այդ արարքի սահմաններում չի կարող համարվել տևող, քանի որ տևող հանցագործությունը դադարման ցանկացած պահին համարվում է ավարտված և չի կարող հանցափորձ համարվել: Այլ կերպ՝ տևող հանցագործությունը տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացումն է, հետևաբար եթե անձը սկսել է կատարել տևող հանցագործություն, ապա ցանկացած պահի, երբ այդ արարքը սուբյեկտիվ կամ օբյեկտիվ հանգամանքներից ելնելով կդադարեցվի, այդ պահին արարքը համարվելու է ավարտված հանցագործություն, հետևաբար նման իրավիճակներում հանցագործությունը չի ավարտվում անձի ձերբակալմամբ:

Այնուամենայնիվ, եթե որևէ կերպ սույն քրեական գործի շրջանակներում դիտարկվի, որ անձին մեղսագրված է տևող հանցագործության կատարում, ապա Դատարանը հարկ է համարում իր դիրքորոշումը հայտնել այդ առթիվ ևս: Վերը ներկայացված իրավակարգավորումների և փաստական հանգամանքների համատեքստում, Դատարանը արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանը տևող հանցագործության ավարտման պահը պայմանավորում է արարքի դադարման պահի հետ և վերջինիս դրսևորման երկու եղանակ է ներկայացնում՝ առաջինը կապելով սուբյեկտիվ (մեղայականով ներկայանալ), իսկ երկրորդը՝ օբյեկտիվ (հանցանք կատարած անձից անկախ հանգամանքներ) փաստերի հետ: Սույն

քրեական գործի շրջանակներում առկա է վերոնշյալ դրսևորումներից երկրորդը, քանի որ ենթադրյալ վերագրվող արարքը դադարել է իրավապահ մարմինների միջամտությամբ, այն է՝ «Հաշիշ» տեսակի թմրամիջոցի և «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ դեղահատերի հայտնաբերմամբ և փոխարինմամբ:

Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ անձի ձերբակալման պահը չէր կարող հանդիսանալ ենթադրյալ հանցավոր արարքի ավարտման պահ, քանի որ սույն հանցագործության կատարումը այլևս անհնարին էր դարձել վերոնշյալ առարկաների հայտնաբերման և փոխարինման պահից:

Վերոնշյալ դիրքորոշման առավել առարկայական իլյուստրացիայի համար Դատարանը հարկ է համարում ներկայացնել հետևյալ իրավիճակը. անձը ապօրինի կերպով հրազեն է պահում ՀՀ տարածքում գտնվող իր բնակարանի տանիքում և լքում է ՀՀ տարածքը, իրավապահ մարմինները հայտնաբերում են այդ ապօրինի հրազենը, ինչի մասին այդ անձը տեղյակ չի լինում: ՀՀ իրավասու մարմինները քրեական վարույթով միջազգային փոխօգնության շրջանակներում դիմում են այդ անձի գտնվելու երկիր վերջինիս հայտնաբերման նպատակով և անձը տասնյակ տարիներ անց ձերբակալվում է մեկ այլ պետության տարածքում: Արդյոք կարող է մեկնաբանվել այնպես, որ անձին վերագրվող հանցավոր արարքը դադարել է ձերբակալման պահին, բնականաբար՝ ոչ:

Վերը նշվածի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական գործով մեղադրյալ Ռ.Կարապետյանի պաշտպան Ս.Անդրիասյանի միջնորդությունը պետք է բավարարել և թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական գործն ըստ տարածքային ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Ռուսլան Սերգեյի Կարապետյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրի մեջբերված հատվածից ակնհայտ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393 և 396 հոդվածների համապատասխան մասերով նրան մեղսագրված հանցանքները*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 33-38:

կատարելու դիտավորությունը շարունակվել է նաև իրավապահների կողմից «հաշիշ» և «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցների պարունակությամբ դեղահատերի հայտնաբերումից և փոխարինումից հետո: Մասնավորապես՝ Ռուսլան Կարապետյանին մեղսագրված է Արմավիր քաղաքի Հայրենյաց փողոցի 32 հասցեի դիմաց վերը նշված «փոխարինված առաքանին» ստանալուն (ձեռք բերելուն) ուղղված արարք (փաստ), որն ավարտին չի հասցվել վերջինի կամքից անկախ հանգամանքներում, ինչը նշանակում է, որ նախնական դատաքննությունների ընթացքում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տրամադրության տակ եղած և գնահատելու հնարավորություն ընձեռող տվյալների համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-46-393 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396 հոդվածի 3-րդ մասով Ռուսլան Կարապետյանին մեղսագրված հանցանքները ենթադրաբար կատարվել են հենց նշված պահին և նշված վայրում:

- Թեև Ռուսլան Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 46-399 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված հանցանքը ենթադրաբար կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, այնուհանդերձ ըստ մեղադրանքի փաստական նկարագրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-46-393 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396 հոդվածի 3-րդ մասով Ռուսլան Կարապետյանին մեղսագրված հանցանքները հաջորդել են «առաջին հանցանքին», որոնք արդեն ենթադրաբար կատարվել են Արմավիր քաղաքի Հայրենյաց փողոցի 32 հասցեի դիմաց, այսինքն՝ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերը նշված դատողությունները բխում են բացառապես Ռուսլան Սերգեյի Կարապետյանին ներկայացված մեղադրանքի փաստերից և չեն հանդիսանում դրանում նկարագրված որևէ հանգամանքի հաստատում կամ հերքում: Ասվածից հավասարապես բխում է նաև, որ առաջին ատյանի դատարանը, նախնական դատաքննություններում վարույթի ընդդատության հարցը քննարկելիս, կարող է հիմնվել բացառապես մեղադրանքի փաստական նկարագրի վրա, իսկ դրանում

նկարագրված հանգամանքները հաստատելը կամ հերքելը հանդիսանում են դատական քննության հետագա փուլերի հարցեր: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 45-49:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

(…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *« 1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին: Միևնույն ժամանակ, օրենսդիրն առանձին կարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ամրագրելով, որ այդ դեպքերում մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ Ռ.Կարապետյանին վերագրվող ենթադրյալ հանցանքը դադարել է Երևան քաղաքում իրավապահ մարմինների միջամտությամբ, այն է՝ հաշիշ տեսակի թմրամիջոցի և բուպրենորֆին տեսակի թմրամիջոցի պարունակությամբ դեղահատերի հայտնաբերմամբ և փոխարինմամբ, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[7]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ Ռուսլան Կարապետյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրից ակնհայտ է, որ վերջինիս մեղսագրված հանցանքները կատարելու դիտավորությունը շարունակվել է նաև իրավապահների կողմից հաշիշ և բուպրենորֆին տեսակի թմրամիջոցների պարունակությամբ դեղահատերի հայտնաբերումից և փոխարինումից հետո: Մասնավորապես, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Ռ.Կարապետյանին մեղսագրված է Արմավիր քաղաքի Հայրենյաց փողոցի 32 հասցեի դիմաց վերը նշված փոխարինված առաքանին ստանալուն ուղղված արարքի կատարում, որն ավարտին չի հասցվել վերջինի կամքից անկախ հանգամանքներում, գտել է, որ նախնական դատալսումների ընթացքում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի տրամադրության տակ եղած և գնահատելու հնարավորություն ընձեռող տվյալների համաձայն՝ վերջինիս մեղսագրված հանցանքները ենթադրաբար կատարվել են Արմավիրի մարզի տարածքում[8]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել Ռ.Կարապետյանի կողմից փոխարինված զանգվածներով առաքանին ստանալուն ուղղված գործողությունների կատարման վայրը, որը, համաձայն ներկայացված մեղադրանքի և վարույթի նյութերի, հանդիսացել է Արմավիրի մարզը: Այլ կերպ, ենթադրյալ հանցանքի ավարտման (կատարման) վայր տվյալ պարագայում պետք է դիտարկել ոչ թե հաշիշ տեսակի թմրամիջոցի և բուպրենորֆին տեսակի թմրամիջոցի պարունակությամբ դեղահատերի հայտնաբերման և փոխարինման վայրը, այլ անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարմանն ուղղված գործողությունների կատարման վայրը:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ռուսլան Սերգեյի Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 44-46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 44-396-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ԱՐԴ/0233/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ